

**ՆԱԽԱԳԻԾ**

**Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն Ի Գ Ր Ո Ղ Ն Ե Ր Ի Մ Ի ՈՒԹ Յ Ա Ն Շ Ի Ր Ա Կ Ի Ս Ա Ր Ձ Ա Յ Ի Ն Բ Ա Ժ Ա Ն Ս ՈՒ Ն Ք Ի Ն ՈՐ Պ Ե Մ Ն Վ Ի Ր Ա Տ Վ ՈՒԹ Յ ՈՒ Ն Դ Ր Ա Մ Ա Կ Ա Ն Մ Ի Ջ Ո Ց Ն Ե Ր Հ Ա Տ Կ Ա Ց Ն Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Գրողների Միության Շիրակի մարզային վարչության նախագահի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2017 թվականի փետրվարի 10-ին N1683 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Գրողների Միության Շիրակի մարզային բաժանմունքին որպես նվիրատվություն հատկացնել 600 000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2017 թվականին նախատեսված բազմաբնույթ գրական միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու և իրականացնելու համար :
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեի 8/4/2 գործառնական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին >> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով, այն փոխանցելով Ամերիաբանկ 1570001185520100 հաշվեհամարին :

**Ռ.ՍԱՆՈՅ ԱՆ**

**Ռ.ԱՄՍՏ ԲՅ ԱՆ**

**Ա. ԳՐԻԳՈՐՅ ԱՆ**

**Ա.ԲԱԼ ԱԲԵԿՅ ԱՆ**

**Լ .ՋԻԼ ԱՎՅ ԱՆ**

